ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
սուբսիդիայի տրամադրման

N -2-15

ք. Երևան «27» 01 2015թ.

ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը՝ ի դեմս նախարարության աշխատակազմի ղեկավար Արմեն Շահնազարյանի (այսուհետև՝ Նախարարություն), որը գործում է Նախարարության կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Նորամուծության և ձեռներեցության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ը՝ ի դեմս տնօրեն Գևորգ Վարդանյանի (այսուհետև՝ Կազմակերպություն), որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, և երկուսը միասին (այսուհետև՝ Կողմեր), ղեկավարվելով ՀՀ կառավարության 2009թ. ապրիլի 23-ի «Նորամուծության և ձեռներեցության ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն ստեղծելու և նրա կանոնադրությունը հաստատելու մասին» N454-Ն որոշումով, ՀՀ կառավարության 2003թ. դեկտեմբերի 24-ի «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից իրավաբանական անձանց սուբսիդիաների և դրամաշնորհների հատկացման կարգը հաստատելու մասին» N1937-Ն որոշումով և «Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության 2014 թվականի դեկտեմբերի 4-ի ՀՕ-192-Ն օրենքով, կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետև՝ Պայմանագիր) հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Պայմանագրով սահմանվում է «Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 08 բաժնի, 02 խմբի, 01 դասի «Գրադարանային ծառայություններ» ծրագրով (այսուհետ՝ Ծրագիր) պետական աջակցության տրամադրման կարգը, որի շրջանակներում Նախարարությունը պարտավորվում է Կազմակերպությանը տրամադրել պետական բյուջեով նախատեսված ֆինանսական միջոցները՝ կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվության և Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2014 թվականի օգոստոսի 14-ի N 769-Ա հրամանով ստեղծված 2014 թվականի պետական բյուջեից ֆինանսավորվող ծրագրերի շրջանակներում կատարված աշխատանքների

ընդունման ոլորտային հանձնաժողովների (այսուհետև՝ հանձնաժողով) արձանագրության հիման վրա և հանձնման-ընդունման ակտի հիման վրա:

1.2 Աշխատանքների կատարման ծախսերի ուղղությունները սահմանվում են Պայմանագրի անբաժանելի մասը հանդիսացող N-1 հավելվածով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Նախարարությունն իրավունք ունի՝

2.1.1 Կազմակերպությունից պահանջել Ծրագիրն իրականացնել սույն պայմանագրի ծրագրով սահմանված ժամկետում:

2.1.2 Կազմակերպությունից պահանջել Ծրագրի իրականացման համար << պետական բյուջեից հատկացված ֆինանսական միջոցներն օգտագործել ըստ նպատակի:

2.1.3 Ուսումնասիրել Ծրագրի կատարման ընթացքը և աշխատանքների կատարման որակը առանց միջամտելու վերջինիս գործունեությանը:

2.2. Նախարարությունը պարտավոր է՝

2.2.1. Կազմակերպությանը տրամադրել պետական բյուջեով նախատեսված ֆինանսական միջոցները՝ սույն Պայմանագրի 1.1 կետով սահմանված կարգով:

2.3 Կազմակերպությունը պարտավոր է՝

2.3.1 Պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել ծրագրով և (կամ) սույն պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով:

2.3.2 Իր ուժերով և իր հաշվին վերացնել աշխատանքների կատարման ընթացքում իր մեղքով թույլ տրված թերությունները:

2.3.3 Նախարարությանն եռօրյա ժամկետում տեղեկացնել աշխատանքների սպասվելիք արդյունքի ստացման անհնարինության հայտնաբերման կամ աշխատանքները շարունակելու աննպատակահարմարության մասին:

2.3.4 Նախարարությանը ներկայացնել աշխատանքների կատարման վերաբերյալ << պետական բյուջեից հատկացված ֆինանսական միջոցների նպատակային օգտագործման վերաբերյալ, ինչպես նաև << ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2008թ. փետրվարի 4-ի N80-Ն հրամանով հաստատված ձևով՝ եռամսյակային աճողական (ձև <-2, <-4 և տեքստային) հաշվետվություններն՝ ըստ փուլերի, մինչև հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 10-ը:

2.4. Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.4.1. Իրականացված միջոցառման արդյունքը պետական մարմնի կողմից ընդունելու դեպքում պահանջել վճարել իրեն հասանելիք գումարը:

3. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՉԱՓԸ ԵՎ ԿԱՐԳԸ

3.1 Տրամադրվող սուբսիդիայի առավելագույն չափն է 145674.9 (մեկ հարյուր քառասունհինգ միլիոն վեց հարյուր յոթանասուն չորս հազար ինը հարյուր) հազ. դրամ, սպասարկվող գրականության տարեկան առավելագույն քանակը՝ 160000 տացք, որի փոփոխումը իրականացվում է Կողմերի գրավոր համաձայնությամբ՝ կնքելով լրացուցիչ համաձայնագիր: մեկ միավոր գրականության սպասակման նվազագույն շահավետ գինն է՝ 910.47 դրամ (145674900դրամ:160000տացք), համաձայն ՀՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարի 24.11.2004թ. N446-Ն հրամանի՝ գրադարանի վճարովի ծառայությունների գինը հավասար է 0-ի :

3.2 Վճարումն իրականացվում է պետական բյուջեով նախատեսված գումարների սահմաններում Կազմակերպության կողմից ներկայացվող եռամսյակային հայտերի հիման վրա՝ 10 (տաս) աշխատանքային օրվա ընթացքում, նախորդ հաշվետու ժամանակաշրջանի հաշվետվությունները սահմանված կարգով Կոմիտեի կողմից ընդունման արդյունքներով: Ընդ որում առաջին եռամսյակի, և յուրաքանչյուր հաջորդ եռամսյակների առաջին ամսվա գումարների վճարումը կատարվում է Կատարողի կողմից ներկայացված հայտերի հիման վրա՝ մինչև կատարողի կողմից ներկայացված հաշվետվությունների սահմանված կարգով ընդունումը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

4.1 Պայմանագրից ծագող պարտավորությունները ուժի մեջ են մտնում պայմանագրի կնքման պահից, տարածվում են 2015թ. հունվարի 12-ից հետո ծագած իրավահարաբերությունների վրա և գործում են մինչև 2015թ. դեկտեմբերի 25- ը:

5. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

5.1 Կազմակերպության կողմից Ծրագրի իրականացման համար պայմանագրով նախատեսված հաշվետու ժամանակաշրջանում կատարված աշխատանքները Նախարարության կողմից ընդունվում են Կոմիտեի Արձանագրությամբ՝ համապատասխան ստորաբաժանման և ֆինանսաբյուջետային վարչության եզրակացությունների հիման վրա:

5.2 Կատարված աշխատանքներում թերություններ հայտնաբերելու դեպքում Նախարարության համապատասխան ստորաբաժանումների եզրակացությունների հիման վրա այդ մասին Կազմակերպությանը ծանուցում է 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում: Այդ դեպքում կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունը Կոմիտեի կողմից ընդունվում և ստորագրվում է թերությունները վերացնելուց հետո:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Սույն պայմանագրով նախատեսված պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար կողմերը պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

7.1 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով, համաձայնության չգալու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

8. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ / ՖՈՐՍ - ՄԱԺՈՐ/

8.1 Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը:

8.2 Կողմերը պարտավոր են վերոհիշյալ իրավիճակների մասին անհապաղ տեղեկացնել միմյանց՝ նշելով դրանց հետևանքների վերացման հնարավոր ժամկետները:

8.3 Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 /երեք/ ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծարել Պայմանագիրը՝ այդ մասին նախապես գրավոր տեղյակ պահելով մյուս կողմին:

9. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

9.1 Պայմանագիրը կազմված է սույն հիմնական տեքստից և հետևյալ Հավելվածից, որը կազմում է Պայմանագրի անբաժանելի մասը.

- Հավելված 1 «Գրադարանային ծառայություններ» աշխատանքների ծախսերի նախահաշիվ

9.2 Պայմանագրի պայմանների փոփոխումը, լրացումը կամ գործողության դադարեցումը իրականացվում է Կողմերի գրավոր համաձայնությամբ:

9.3 Պայմանագրով չնախատեսված հարցերը կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ձևով:

9.4 Պայմանագիրը կազմված է հայերեն լեզվով, 2 (երկու) օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

10. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Նախարարություն	Կազմակերպություն
ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	«Նորամուծության և ձեռներեցության ազգային կենտրոն» ՊՈԱԿ
Հասցեն 0010 ք. Երևան, Մ. Մկրտչյանի 5 Կենտրոնական գանձապետարանի գործառնական վարչություն h/h 900011010460 ՀՎՀՀ 02505983	Հասցեն 0051, ք. Երևան, Կոմիտասի 49/3 Երևան Կոնվերս Բանկ ՓԲԸ "Կենտրոնական" մասնաճյուղ h/h 1930031500940100 ՀՎՀՀ 00099892
ՀՀ էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի ղեկավար	Տնօրեն՝
Արմեն Շահնազարյան	Գևորգ Կարդանյան
Կ.Տ.	Կ.Տ

18/01/15թ.

Հավելված N 1

2015թ. « 01 » « 27 » -ին
Կնքված
N 2-15 պայմանագրի

«Նորամուծության և ձեռներեցության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի
<< պետական բյուջեով նախատեսված 2015թ. «Գրադարանային ծառայություններ» ծրագրի աշխատանքների ծախսերի
նախահաշիվ

հազ. դրամ

<<<	Աշխատանքի անվանումը	Չափման միավոր	Քանակ	Միավորի գինը	1 ին եռամսյակ		6 ամիս		9 ամիս		տարի		Ընդամենը ծախսեր
					Պետ.բյուջեից հատկ. գումար	Այլ միջոցների գումար	Պետ.բյուջեից հատկ. գումար	Այլ միջոցների գումար	Պետ.բյուջեից հատկ. գումար	Այլ միջոցների գումար	Պետ.բյուջեից հատկ. գումար	Այլ միջոցների գումար	
1	Վարձատրություն և այլ պարտադիր վճարներ	մարդ*ամիս	91*12	115.38	22119.7		53267.0		86038.3		125994.4		125994.4
2	Գրականության բաժանորդագրություն	օրինակ	600	11.7			2500.0		2500.0		7000.0		7000.0
3	Պահպանման ծախսեր				4000.0	300.0	6000.0	600.0	9000.0	900.0	12580.5	1830.0	14410.5
4	Այլ ընթացիկ ծախսեր				0.0	500	30.0	1000.0	75.0	1500.0	100.0	2000.0	2100.0
	Ընդամենը ծախսեր	X	X	X	26119.7	800.0	61797.0	1600.0	97613.3	2400.0	145674.9	3830.0	149504.9

Պատվիրատու
<< էկոնոմիկայի նախարարության
աշխատակազմի ղեկավար

Ա.Շահնազարյան

Կ.Տ.

Կատարող
ՆՁԱԿ ՊՈԱԿ-ի
տնօրեն

Գ.Վարդանյան

Կ.Տ.

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

«Նորամուծության և ձեռներեցության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի

«Գրադարանային ծառայություններ» 2015թ. Ծրագրի կազմակերպման և իրականացման աշխատանքների

Միջոցառումը	Ակնկալվող արդյունքը	I եռամսյակ		I կիսամյակ		9 ամիս		Տարի	
		Ակնկալվող արդյունքը	Գնահատման չափանիշը	Ակնկալվող արդյունքը	Գնահատման չափանիշը	Ակնկալվող արդյունքը	Գնահատման չափանիշը	Ակնկալվող արդյունքը	Գնահատման չափանիշը
Գիտատեխնիկական գրականության հիմնապաշարների արդիականացում, բաժանորդագրման կազմակերպում, համապատասխան մատենագիտական մշակում, պահպանում, նոր ստացված և ռետրո գրականության էլեկտրոնային գրացուցակի ձևավորում:	Ձեռք բերված գիտատեխնիկական նոր գրականություն (օրինակ)	120	օրինակ	250	օրինակ	380	օրինակ	550	օրինակ
	Համալրված էլեկտրոնային քարտարան (գրառում)	3000	գրառում	7000	գրառում	11000	գրառում	16000	գրառում
Գրադարանային տեղեկատվության տարածման իրականացում ավանդական և ժամանակակից տեղեկատվական-հեռահաղորդակցման տեխնոլոգիաների կիրառմամբ, միջազգային գիտատեխնիկական տեղեկատվական ռեսուրսներից օգտվելու ազատ մուտքի տրամադրում. Նոր գրականության և թեմատիկ ցուցահանդեսների, գիտատեխնիկական և գործարար հանրության աջակցող միջոցառումների կազմակերպում:	Գրադարանային հիմնապաշարների միջին տացքի ապահովում (տացք)	30000	տացք	75000	տացք	120000	տացք	160000	տացք
	Փաստաթղթերի էլեկտրոնային առաքման ծառայությունից օգտվող շահառուների թիվը	40	շահառու	90	շահառու	140	շահառու	200	շահառու
	Պատրաստված մատենագիտական ցանկեր, սինթետիկ տեղեկատվական նյութեր (թիվը)	8	մատ.ցանկ	16	մատ.ցանկ	26	մատ.ցանկ	40	մատ.ցանկ
	Օգտագործված միջազգային գրադարանային տեղեկատվական բազաներ	4	ՏԲ	10	ՏԲ	17	ՏԲ	25	ՏԲ
	Նոր գրականության ցուցահանդես (ցուցահանդես)	5	միջոցառում	15	միջոցառում	25	միջոցառում	40	միջոցառում

Կազմակերպություն
ԵԶԱԿ ՊՈԱԿ-ի Տնօրեն՝
Գ. Վարդանյան
Կ.Տ.